**Հայտարարություն**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանով հաստատ-ված՝ «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի հա-մար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ»-ի դրույթներով, հայտարարում է միջին մասնագիտական կրթական ծրագրով **«Ֆինանսներ», «Բանկային գործ», «Ապահովագրական գործ»** մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսների թափուր հաստիքների համալրման մրցույթ:

| **Մասնագիտական մոդուլներ** | **Ժամ** |
|---|---|
| ՀՀ հարկային օրենսդրության հիմունքներ | 207 |
| Համայնքային ֆինանսներ | 210 |
| Կազմակերպությունների ֆինանսեր | 429 |
| Բանկային համակարգչային ծրագրեր, «ՀԾ Բանկ» համակարգ | 216 |
| Արժեթղթերով գործառնություններ | 78 |
| Ավանդային և վարկային գործառնություններ | 78 |
| Բանկային գործի հիմունքներ | 564 |
| Ապովագրության տեսակներն ու դասերը | 206 |
| Ապահովագրությունը շուկայական տնտեսությունում | 96 |
| Ոչ կյանքի ապահովագրություն | 206 |
| Հաշվապահական հաշվառումը բանկերում | 396 |
| **Ընդամենը թափուր ժամեր** | **2686** |

Պետական կրթական չափորոշիչով դասավանդողին ներկայացվող պահանջներ՝ ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող («Ֆինանսներ» «Ֆինանսներ և վարկ», «Մաքսային գործ», «Ապահովագրական գործ» «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում», «Բանկային գործ») բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձ-րագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի փաստաթղթաշրջանառության բաժին** են ներկայացնում ներքոնշյալ փաստաթղթերը՝

1) դիմում (լրացված՝ կցված Ձև 1-ին համապատասխան),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ՝ բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (կցված Ձև 4-ին համապատասխան),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճանը, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Լրացված դիմումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի **օգոստոսի 7-ից 2025 թվականի օգոստոսի 20-ը ներառյալ**՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 16:00-ն (բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից), ՀՊՏՀ **փաստաթղթաշրջանառության բաժին** (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետ (կենտրոնական մասնաշենք), 3-րդ հարկ, հեռ. (+374 10(59-34-23):

Մրցույթը տեղի կունենա 2025 թ. օգոստոսի 25-ին՝ ժամը 10:00-ին, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետ (կենտրոնական մասնաշենք):

Ձև 1

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

(Ֆինանսատնտեսագիտական քոլեջ)

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

(նշվում է թափուր տեղի անվանումը)

Մանկավարժի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու նպատակով

ՀՊՏՀ ռեկտոր պարոն Ա.Վ. Գրիգորյանին

_______________________________________________________________ -ից

(դիմողի անունը, հայրանունը, ազգանունը)

_____________________________________________________________________

(դիմողի հաշվառման վայրը)

__________________________________________

(դիմողի հեռ. (աշխատանքային, բնակ., բջջ.)

_______________________________________________________________

(անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

Ծնված՝ ________________________________

(օրը, ամիսը, տարին, վայրը)

## Դ Ի Մ ՈՒ Մ

Ծանոթանալով Մանկավարժի թափուր պաշտոնի համար տրված հայտարարությանը, մրցույթի պայմաններին և անցկացման կարգին՝ խնդրում եմ գրանցել ինձ որպես մրցույթի մասնակից

Քաղաքացիությունը ______________________________

Դատապարտվել եմ՝ այն, ոչ (ընդգծել)___________________

Դատվածությունս հանված կամ մարված է՝ այո, ոչ (ընդգծել)___________________

Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_________________

Դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)__________________

ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1030-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի որևէ հիվանդությամբ տառապում եմ, չեմ տառապում (ընդգծել) __________________

Համակարգչային գրագիտությունը ________________________________________
______________________________________________________________________

(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Կից ներկայացնում եմ մրցույթի մասին հայտարարությունում նշված փաստա-թղթերը:

Նախազգուշացված եմ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ ___________________________ «____» _____________ 20 __ թ.

Ձև 4

# Ինքնակենսագրություն

1. Աշխատանքային գործունեություն (վերջին աշխատանքի վայրը լրացվում է առաջինը)

2. Կրթություն (մասնագիտական կրթության որակավորման աստիճանը՝ դիպլոմ(ներ), կրթության վկայագրերը, հավաստագրեր, վկայականներ)

3. Կոչումներ

4. Որակավորման տարակարգ

5. Հրատարակած հոդվածներ

6. Լեզուների իմացություն

7. Համակարգչային իմացություն

8. Այլ տվյալներ: